ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ. ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ, ԼՍԱՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Դեկտեմբերի 13-ին ժամը 13:00-ին

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 1-ին մասնաշենքի 425 լսարանում տեղի կունենա «**Կրթության դերը արդի աշխարհում. կրթական մոդելներ, լսարանից մինչև իրական կյանք»** թեմայով գիտաճանաչողական սեմինար: Սեմինարը նախատեսված է ինչպես ուսանողների, այնպես էլ կրթական գործընթացին մասնակից շահագրգիռ անձանց համար:

Սեմինարի բանախոսներն են.

*Երևանի պետական համալսարանի դոցենտ, պ.գ.թ., միջազգայնորեն հավաստագրված կրթության փորձագետ, «Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ նախագահ, բազմաթիվ միջազգային գիտաժողովներում դասընթացներով և բանախոսություններով հանդես եկած **Լիլիթ Մկրտչյանը**:*

- *ՀԱԱՀ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոսներ **Լուսինե Չիլինգարյանն ու պ.գ.թ. Մերի Նաջարյանը**, ովքեր թեմայի առնչությամբ մասնակցել ու վերապատրաստվել են տարբեր դասընթացների շրջանակներում:*
- *Հանդիպմանը մասնակցում են նաև Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ուխ նախագահ, Ֆինանսների կառավարում մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի **Հռիփսիմե Մուրադյանն ու** Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պահածոյացման տեխնոլոգիա մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի **Մարիամ Մինասյանը:***

Սեմինարի նպատակն է կրթական գործընթացների համաշխարհային փորձի հիման վրա խոսել կրթական կառավարման բոլոր այն գործիքների մասին, որոնց կիրառմամբ կարելի է իրականացնել կրթական ճիշտ գործընթացներ և ստանալ ցանկալի արդյունքներ՝ լսարանից մինչև իրական կյանք, և այդ համատեքստում վերհանել մեր բուհում առավել հաճախ հանդիպող խնդիրներ, որոնց լուծումները բխում են ՀԱԱՀ Ռազմավարական և ՈՒԿՈՒ ծրագրերի իրագործման շահերից:

Սեմինարի հիմնական թեմաներն են.

- ✓ *Կրթության չորս հենասյուները և ՅՈՒՆԵՍԿՕՆ*
- ✓ *Տնտեսական համագործակցության և զարգացման ուսումնական բարեկեցության 2030թ. ծրագիրը*
- ✓ *Գիտելիքների և հմտությունների համակողմանի ընկալումը*
- ✓ *Ժամանակակից աշխատաշուկայի կողմից պահանջվող հմտությունները*
- ✓ *Դասավանդման գործընթացը և արժեհամակարգերի ձևավորումը*
- ✓ *Կրթական գործընթացում առավել հաճախ հանդիպող խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները (ՀԱԱՀ-ի օրինակով)*

Սեմինարը կազմակերպվում է «Երիտասարդ պատմագետների ասոցիացիայի» և ՀԱԱՀ Ագրոբիզնսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ուսանողական խորհրդի աջակցությամբ:

Սեմինարին մասնակցելու համար էլփոստի նշված հասցեին ուղարկել **«գրանցվել»** բառը murad.hrip@mail.ru